

ՋՐՈՓՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԻՍՏԵՄԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

Հ. Դ. ԽՈՒՐՇՅԱՆ

Իր ծննդավայրին նվիրած ջերմ նկարագրությունների մեջ Գարեգին Սրվանձտյանը Վանն անվանում է «ջրաշատ»։ Այգեստանում, որ Վանի հայկական թաղամասն էր, փողոցներ կային, որոնցով անցնում էին մի քանի առու՝ զույգ ափերին բարձրացած բարդիների երկար շարքերով։ Բայց Սրվանձտյանի «ջրաշատ» ածականը կարող է թյուր գաղափար տալ ընթերցողին։ Լինչն էլ ջերմ էջեր է նվիրել Վանին։ Այգեստանի մասին նա ասում է՝ «Պատուհաններս նայում էին դուր-բական գեղեցկություն ունեցող մի անտառի։ Այս ամբողջ դալարիքը բուսնում էր միայն ոռոգ-ման շնորհիվ»։ Բայց այստեղ արդեն ոռոգում բառը հասկացվում է արհեստական ոռոգում իմաստով։ Վանը շրաշատ էր միայն արհեստական աղբյուրների՝ քյահրեզների շնորհիվ, որոնք բնատուր չէին, այլ հանված էին մարդու ձեռքով։

Վանա լճի բարձրությունը ծովի մակերևույթից 1720 մետր է։ Լճի արևելյան ափն աննկա-տելիորեն բարձրացող հարթավայր է, որի երկարությունը մինչև Կարնվորա սարը կլինի ոչ պա-կաս քան 20 կիլոմետր, իսկ լայնությունը հարավում բարձրացած Ս. Խաչի սարից մինչև հյուսի-սում ընկած Զրմ-զրմ Մաղարան (Ուրարտական թագավորների նստավայրը) կլինի 14—15 կի-լոմետր։ Զրմ-զրմ Մաղարան ծովը շհասած վերջանում է և Վանի հարթավայրը ծովափով միա-նում է Թիմարի շրջանի հարթավայրին։

Ծովից 6—7 կիլոմետր արևելք ընկած գծից և կսվող հայաբնակ Այգեստանի բարձրությունը 1500 և ավելի մետր է։ Բարեխառն գոտում սա մեծ բարձրություն է ո՛չ միայն մրգագործության, այլև առհասարակ հողագործության համար։ Բայց և այնպես անտառի տպավորություն գործող մրգաստաններում ասում էին խաղող և բաղձատեսակ մրգեր։

Ասենք նաև, որ Կարնվորա սարի հարավային վերջավորության վրա, դեպի Վերին Վարազ և Վարազա սարը տանող կիրճի բերանին գտնվող Վարազա վանքի Ս. Նշան եկեղեցու կողքին, քամիներից պաշտպանված մի եռանկյունի գոգավորության մեջ, որ Այգեստանից բարձր էր ավե-լի քան կես կիլոմետր, ուրեմն 2300—2400 մետր բարձրության վրա, Խրիմյանն ամբարել էր մի նվաղ աղբյուրի ջուրը և այգի էր տնկել, որտեղ խաղողից բացի աճում էին տանձը, խնձորը, ծի-րանը, սալորը, ընկույզը և այլն։ Բայց Խրիմյանին չէր հաջողվել քամիներից պաշտպանված այդ գոգավորությունից դուրս ընդարձակել իր տնկած այգին և նա բավարարվել էր միևնույն գո-գավորության շարունակությունը կազմող սարալանջին միայն ուռենյի և բարդի ծառերի մի պու-րակ տնկելով։ Ավելին։ Վարազա Նարի հյուսիս-արևելյան, ոչ ծովահայաց կողմում, կիրճի մեջ, Վարազա վանքից ցածր ընկած Սալնապատի — Ս. Գրիգորի վանքի շուրջը ոչ մի մրգատու ծառ չկար։

Ինչո՞վ բացատրել այս երևույթը։

Վանա լճի ափերին, 1800 մետր և ավելի բարձրության վրա ձմեռը (նոյեմբերից մինչև մարտ) ցրտաշունչ է և ձյունառատ, իսկ ամառը չորային է և այնքան տաք, որ, ինչպես Լինչն է նկատել, «այդ ցամաքային չոր մթնոլորտում տաք արևի ճառագայթների տակ մամուռ ու բորբոս չկա»։

Թեև ցրտաշունչ, բայց ձյունառատ ձմեռը, տաք ամառը, ուժեղ քամիների բացակայությունը և ոռոգման կանոնալոր սիստեմները բարենպաստ պայմաններ էին ստեղծել մրգաբուծության համար։ Նվ Վանա լճի այն բոլոր առափնյա ծովահայաց հարթավայրերը, որոնք, երեք կողմից բարձր լեռներով շրջապատված լինելով, ղերծ են սաստիկ քամիներից, դարերի ընթացքում հա-րուստ մրգաստաններ էին դարձել։

Ցամաքային չոր կլիման պահանջում է ոռոգում, իսկ բնությունն այս տեսակետից չի ժպտա-ցել Վանի հարթավայրին։ Տեղումների մեծ մասը ձյան ձևով թափվում է ձմռանը. անձրև տեղում է միայն գարնանն ու աշնանը, ամռանը անձրև գրեթե բոլորովին չի զալիս։ Մյուս կողմից, հար-

1 Լինչ, «Հայաստան», հատ. 2, Լեոն Լարենցի թարգմ., Պոլիս, 1914, էջ 90—91.

թավայրը երիզող բարձր լեռների առկայության պատճառով ոչ մի գետ կամ գետակ չի անցնում նրա միջով: Ամեն ինչ կախված է արհեստական ոռոգումից, և մարզը, սկսած ուրարտական ժամանակաշրջանից (գուցե և է՛լ ավելի վաղ), ստեղծել է արհեստական ոռոգման յուրօրինակ սիստեմներ, որոնք խնամքով պահպանում և աստիճանաբար ընդարձակում էին մինչև 1915 թ.:

Ուրարտական ժամանակաշրջանին են վերագրվում 1) Չեչիշ Գյուլ արհեստական մեծ ջրամբարը՝ հայաբնակ Դարմանգեղից վերև, Ոսկերակ, Կողպանց և Ֆառուխ հայաբնակ գյուղերի մոտ, քաղաքից մոտավորապես 30 կիլոմետր դեպի արևելք: 2) Սըխկայի Գյուլ արհեստական փոքր ջրամբարը համանուն հայաբնակ գյուղի հյուսիսային կողմում, հայաբնակ Ավերակի, Մխկներ և Լամդկերտ գյուղերի տակ և հայաբնակ Շահբաղի գյուղի վերևում: 3) Սոսոյի գյուլը Կարնվորա սարի լանջին՝ Սըխկա գյուղից դեպի հարավ-արևելք, իսկ Կարնվորա վանքից ու Շուշանց հայաբնակ գյուղից դեպի հյուսիս: 4) Շամիրամա առու ջրանցքը: Այս պատմական ջրանցքն սկիզբ էր առնում Վերին Հայոց ձորում, Անգղ (խոշար) գետի հարավային կողմում գտնվող Վերին Բժնկերտ գյուղի մոտակա Սարակահնի (քրդերեն՝ գլխավոր աղբյուր) ակունքից (մոտ 400 քառ. մ. փրփրադեզ ջրավազանից) և երկու ջրանցքով ջուր էր տալիս Անգղ գետի ձախափնյա հողերին մինչև Ոստան, իսկ ամենաջրառատ երրորդ ջրանցքը խառնուրդ գյուղի մոտ կտրում-անցնում էր Անգղ գետը և ինը, հիմնականում հայաբնակ, գյուղերի արտերին ու այդիններին ջուր տալով, հասնում էր վանի թրքաբնակ Շամիրամի թաղը: խառնուրդ գյուղի մոտ վիթխարի ժայռաբեկորներով գետի հունը նեղացված էր մինչև 8 մետր: «Նավը», որով ջրանցքի ջուրը կտրում-անցնում էր գետն այդ կետում, պատրաստված էր իրար կողքի և իրար վրա շարված բարդու գերաններից: «Նավի» հատակի լայնությունը $2\frac{1}{2}$ մետր էր, իսկ կողերի բարձրությունը՝ $1\frac{1}{2}$ մետր: Առատ ջուրն այդ «նավով» «պոկե-պուկե» անցնում էր հանդիպակաց՝ հյուսիսային ափը: Անգղի հյուսիսային ափին, Կղզի կոչվող փոքրիկ գյուղի մոտ այդ ջուրը բանեցնում էր մեկ շարքով շինված քառասուն ջրաղաց (քրդերեն՝ Չըլ-Աշ), որից հետո լցվում էր դեպի Վարի Հայոց ձոր ու քաղաք տանող ջրանցքը: Այդպիսով, «նավով» Անգղ գետն անցնում էր քառասուն ջրաղացի ջուր», բայց ճանապարհի 9 գյուղերի այգիներին ու արտերին ջուր տալուց հետո քաղաքի Շամիրամա թաղն էր հասնում 6—7 ջրաղացի ջուրը:

Սակայն ուրարտական դարաշրջանի հնօրյա ոռոգման սիստեմները կառուցվել էին միայն ուրարտական թագավորների նստավայրի (Ջըմ-զըմ Մաղարայի) մերձակա և բերդաքաղաքի մոտակա ցածրադիր հողերը ոռոգելու համար: Քաղաքը վաղուց դուրս էր եկել պարիսպներից և երկարել ու բարձրացել դեպի արևելք: Շամիրամա անվան ջուրը ոռոգում էր միայն ցածրադիր Շամիրամա թաղի այգիները: Այգեստանից շատ բարձր լեռների գոգավորության մեջ կառուցված Քեչիշ գյուլի (ուրարտական ռուսա թագավորի) ջրամբարի ջուրն օգտագործելու համար հատուկ ջրանցք չէր անցկացվել. այդ ջուրը պարզապես րաց էր թողնվում Դարմանգեղա վերևից սկիզբ առնող մի հեղեղատի մեջ, որն անցնում էր քաղաքի հյուսիսային եզրով և կոչվում էր Անգյուսներա (Յայն-կոյսձորի) ջուր: Ջրաշինարարական ներկա տերմինով (обводнение) ասած, այդ ջրամբարը լրացուցիչ ջուր էր տալիս հեղեղատին, որ ամառվա ամիսներին այն չցամաքեր: Անգյուսներա «գետի» ջուրը բարձրանում էր Այգեստանի միայն հյուսիսային փոքրիկ հատվածի վրա, որը հարում էր ուրարտական թագավորների նստավայրին: Սըխկայի գյուլը սակավաջուր էր և Այգեստանից ցածրադիր: Սոսոյի գյուլը շատ ավելի փոքր էր և տնտեսական նշանակություն չունեցավ: Դա դարձել էր բնական մի ծաղկանոց:


Այսպիսով, հնօրյա ոռոգման սիստեմները հայաբնակ Այգեստանի մեծ մասին չէին կարող ջուր տալ և չէին տալիս: Այգեստանի այգիները ոռոգվում էին մի քանի բնական աղբյուրների և հատկապես արհեստական աղբյուրների՝ քյահրեզների ջրերով:

Վան քաղաքի տարբեր մասերում կային Սոֆի—Դահնա, Խին (հին), Նոր, Բոյախանի, Կարա-Մահմադ, Կամարով, Սախակ (Սահակ) բնի, Արարուց, Մասմանի, Շարիֆ ազի (աղայի), Կազոյանի, Վերին Կլոր տարի (բլրի) բնական աղբյուրները, որոնց ջրերն օգտագործվում էին ոչ միայն խմելու, այլև այգիները ոռոգելու համար:

Բնական աղբյուրներից բացի քաղաքի տարբեր մասերում և հատկապես հայկական Այգեստանում կային քանթանների «հանած» արհեստական աղբյուրներ՝ առատաջուր քյահրեզներ, ինչպես, օրինակ, Ծոշ Քյանդուշի (որն ամենաջրառատն էր), Պստիկ Քյանդուշի, Ախթյասան, Խամուռ-քյասան, Թազա, Դարմանգեղա (կամ Աղվսկե-Աղվանյանների), Խոռխոռի, Հաջի-Բաքրի, Չավուշ-Բաշի, Պանիրյանի, Վոխվի (կամ Մոխրի), Ջանգյուլի և Ազատության (կամ Հուրիաթ):

Քյահրեզ անունը պարսկերեն է՝ «Հոր զարկելու» միջոցով քյահրեզ «հանելու» կուլտուրան արևելյան է: Քյահրեզներ կան Պարսկաստանում, Ավղանստանում, Հնդկաստանում և Չինաստանում:

նի արևմտյան անջրդի շրջաններում: Պրոֆեսոր Ի. Պ. Պետրուշևսկին իր «Հողագործությունը և աղրարային հարաբերությունները XIII—XIV դարերի իրանում» իր անրաձանոթ ուսումնասիրության երրորդ գլխում (էջ 114—137) հատկապես կանգ է առնում ոռոգման քյահրեզային սիստեմի վրա:



Խոսելով միայն Ասիայում տարածված ոռոգման այդ յուրօրինակ սիստեմի մասին, պրոֆ. Պետրուշևսկին հարկ է համարում բերել Չինաստանի Սինցղյան (Արևելյան Թուրքեստան) երկրամասի Տուրֆան օազիսի քյահրեզներն անձամբ ուսումնասիրած ոռոս նշանավոր աշխարհագրագետ Գ. Ն. Գրում-Գրժիմայլոյի հետևյալ նկարագրությունը:

«Քյահրեզների կառուցվածքը շատ հասարակ է: Ստորերկրյա ջրերի՝ բնակչությանը հայտնի համեմատաբար ոչ խոր վայրում փորվում է առաջին հորը՝ նեղ ու խոր մի ջրհոր, որը հասնում է ջրի շերտին. առաջին հորից 8-ից մինչև 10 մետր հեռավորությամբ փորվում է ճիշտ այդպիսի երկրորդ հորը և այնուհետև երրորդը, չորրորդը, հարյուրերորդը, մինչև որ այդ հորերի խորությունը հասնում է 2 մետրի: Դրանից հետո այդ հորերը, սկսած վերջինից, որից արդեն սկսվում է առուն, ստորերկրյա գետնուղիով իրար են միացվում մինչև առաջին հորը: Պարզ է, որ բոլոր հորերի ջրերը հորդում են այդ գետնուղիով: Քյահրեզի ջուրն ավելացնելու համար հորերի նոր ճյուղեր են անցկացնում, իսկ եթե հորերի նոր ճյուղեր անցկացնելու համար հարմար պայմաններ չկան, այն ժամանակ կա՛մ մի քանի գուգահեռ քյահրեզներ իրար են միացնում, կա՛մ թե երկարացնում են գետնուղին՝ նորանոր հորեր փորելով վերևի մասում: Բայց գետնուղու երկարացումը դեպի վեր հազվադեպ է լինում, որովհետև այդպիսով հորերի խորությունն աստիճանաբար ավելանում է և, վերջապես, հասնում է առավելագույնին, որը պետք է համարել վերջնական: Այսպես, օրինակ, Հանդուսի քյահրեզների առաջին հորերի խորությունը հասնում է մինչև 85 մետրի: Սակայն այդպիսի խորության վրա քյահրեզների պահպանումը շատ է դժվարանում: Քյահրեզի նորոգումը կատարվում է այն նույն հորերի միջոցով. որոնք փորվել էին գետնուղին շարունակելու համար: Հորերը, իրենց հերթին, խնամքով պահպանվում են փայտե շրջանակներով: Այնուամենայնիվ, փլուզումները հաճախակի երևույթ են և քյահրեզների նորոգումը երբեք չի դադարում: Տուրֆանի բոլոր բնակիչներն էլ մեծ կամ փոքր չափով ծանոթ են քյահրեզների կառուցվածքին, բայց միայն ամենաչափորներն են աշխատում նորոգման վրա, որովհետև այդ աշխատանքն իսկապես որ նույնքան վտանգավոր է համարվում, որքան և դժվարին: Դրա փոխարեն աղետի զոհերը թաղվում են համայնքի հաշվին, իսկ ժողովուրդը պաշտում է նրանց գերեզմանները... Ընդհանուր առմամբ քյահրեզները թե իրենց վիթխարիությամբ և թե մտահղացման համարձակությամբ զարմանալի կառուցվածքներ են: Քյահրեզն ամբողջությամբ գետնի տակն է, տասնյակ մետր խորության վրա, դրա համար էլ իր վրա չի հրավիրում ճանապարհորդի ուշադրությունը: Այնինչ եթե հաշվենք այն ամբողջ աշխատանքը, որ տուրֆանցիները գործադրում են ոչ միայն հարյուրավոր ու հարյուրավոր ընտանիքների գոյությունն ապահովող գետնուղիների ամբողջ ցանցը փորելու, այլև այդ հորերն ու գետնուղիները շարունակ պահպանելու վրա, ապա մեր զարմանքին չափ չի լինի»²:

Մասնավորելով իր խոսքը միայն Պարսկաստանի քյահրեզների մասին, պրոֆ. Պետրուշևսկին գրում է. «Մաթեմատիկական կրթություն ունեցող որակյալ մասնագետ-կառուցողներից, այսպես ասած՝ ինժեներներից (արարերեն՝ մուհանդիս) բացի, դոյություն ունեն քյահրեզ (արարերեն՝

² Г. Е. Грумм-Гржимайло, Описание путешествия в Западный Китай, էջ 227—228 (տե՛ս Н. П. Петрушевский, Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV веков, էջ 123—124)։

կանաւո) հանողների հատուկ արհեստ. այդ փորձված վարպետները կարողանում էին գտնել ջուր պարունակող շերտեր, պահանջված ուղղությամբ փորել հորեր և անցկացնել քահրեզների գետնուղիներ: Արհեստի այդ ճյուղի ներկայացուցիչը պարսկերեն կոչվում էր քահրեզքյան, իսկ արաբերեն՝ մուկաննի... Այդ վարպետները ղեկավարում էին քահրեզների մաքրումը: Քահրեզ հանելու և մաքրելու ժամանակ սև աշխատանքը անշուշտ կատարում էին գյուղացիները պարհակային կարգով կամ վարձովի: Քահրեզի գետնուղու մեջ հաճախ դրվում էր կավե խողովակ, Շամս-ի ֆահրին տալիս է այդ խողովակի հատուկ անունը՝ սուրի:

Քահրեզ հանելու և հորերն ու գետնուղին պարբերաբար մաքրելու դժվարությունը կապված է ամենից առաջ հորերի ու գետնուղու խորության հետ: Ղազվինին տվյալներ է հաղորդում ստորերկրյա ջրերի, հետևաբար նաև քահրեզների գետնուղիների ու հորերի խորության մասին մի քանի վայրերում. Սուլթանիեի շրջանում 2—3-ից մինչև 10 գյազ (արշին), Կումայի շրջանում՝ 15 գյազ, Թավրիզում՝ 30 գյազ, Թավրիզի մոտակա Շանր-ի Ղազանում՝ 10 գյազ, Թավրիզի մոտակա Ռուր-ի Ռաշիդում՝ 70 գյազ, Քիրմանում, Ցակուտիի ասելով, ստորերկրյա ջուրը գտնվում էր 50 գյազ խորության վրա³:

Մեր պատմագրության մեջ կամ հիշատակարաններում տեղեկություններ չկան քահրեզների մասին⁴: Այդ անվան պարսկերեն լինելն անտարակուսելի համարելով պետք է ենթադրել, որ այդ կուլտուրան վան է բերվել Պարսկաստանից և, հավանաբար, XVI—XVII դարերի թուրք-պարսկական սլատերազմների ժամանակ, երբ պարսից զորքը քանիցս մտել է Վան: Շատ հնում, ինչպես պետք է ենթադրել, բնակչությունն ապրել է բերդի տակ, հարավային կողմում գտնվող պարսպապատ «քաղաքամիջում» և ուրարտական թագավորների նստավայր Ջրմ-զրմ Մաղարայի մոտակայքում: Մեր այս ենթադրությունը հիմնվում է միայն խմբիլու և ոռոգման ջրի առկայության վրա: Պարսպապատ «քաղաքամիջում» կային խմբիլու ջրի աղբյուրներ: Ոչ միայն խմբիլու, այլև ոռոգման համար օգտագործվող հորդառատ աղբյուրներ (Սոֆու-Դահնա, Խին և Նոր) կային ուրարտական թագավորների նստավայրի ստորոտից անցնող Անգյուսներա հեղեղատի հակառակ ափին: Մյուս կողմից, ուրարտական ժամանակաշրջանում կառուցված Քեշիշ գյուղ ջրամբարի և Շամիրամա առու ջրանցքի ջրերը ոռոգում էին, ինչպես ասացինք, միայն պարսպապատ «քաղաքամիջին» հարող հարթավայրերը և ուրարտական թագավորների նստավայրի ստորոտին ընկած հողերը:

Անվերջ կոիվների հետևանքով բնակչության մեծ մասը, հավանաբար, ցանկանալով հեռանալ բերդի մոտակա ավելի վտանգավոր գոտուց, անհրաժեշտություն է զգացել քահրեզների միջոցով ջրարբի դարձնել ղեպի արևելք երկարող ու բարձրացող ընդարձակ, բայց միանգամայն անջրդի հարթավայրը: Առանց քահրեզների այդ հարթավայրը չէր դառնա իր այգիներով այնպես հռչակված Այգեստանը: Իրա համար էլ քանքանությունը Վանում տարածված արհեստներից մեկն էր: Վանում կար «քահրեզ հանողների» (քանքանների) մի ամբողջ թաղամաս, որտեղ ապրում էին սերնդե-սերունդ այդ արհեստով պարապող ընտանիքներ: Այդ անունով Վանում կային բավականաչափ տարածված ազգանուններ (Քանքանյաններ): Հայտնի է նմանապես, որ վանից քանքաններ էին հրավիրվել էջմիածին՝ բարձիթողի արված և չգործող քահրեզը վերանույրգելու և ընդլայնելու համար: Այս տեսակետից խիստ բնորոշ է, որ էջմիածնցիներն իրենց այդ արհեստական աղբյուրը կոչեցին ոչ թե պարսկերեն «քահրեզ», այլ այն «հանող» վարպետների արհեստի անունով՝ «քանքան», «քանքանի ջուր», «քանքանի աղբյուր»:

Քանքան բառի դիմաց Ստ. Մալխասյանցի բառարանում կարդում ենք՝ «քանքան» (պարսկ. kanden. հրմ. kən. փորել?) Գ. 1. Հողի տակով փորված առու, ստորերկրյա ջրմուղ... 1. Արհեստավոր, որ քանքան է փորում, ջուր է հանում: Նշանավոր են Վանի քանքանները:

Հր. Աճառյանի Արմատական բառարանում «քանքան» բառը չկա, այլ կա միայն «Քան» արմատը: Այնտեղ կարդում ենք՝ «Քան-հանք», գործածական է յետին հայերենի մեջ, հմտ.

3 II. П. Петрушевский, նույն տեղում, էջ 125:

4 Օգտվելով առիթից հիշենք, որ Գևորգ Գ. կաթողիկոսը վանքապատկան հողերը ոռոգելու համար ձեռնարկում է ջուր բերել Հրազդան գետից: Զանգիրասարի մասմեղական գյուղերը բողոքում են այդ ձեռնարկության դեմ՝ պատճառաբանելով, թե գետի ջուրը կպակասի և չի բարձրանա իրենց հողերի վրա: Թեև Թիֆլիսից քննիչ ուղարկված մասնագետները գտնում են, որ նրանց բողոքն անհիմն է, այնուամենայնիվ, Հրազդանից էջմիածին ջուր տանելու հարցը դրական լուծում է ստանում շուրջ կես դար հետո՝ 1912 թ. սկզբին:

երկաթի քան՝ վրդն. առ. 143 Ասես թե քան ունիմ, ի քարեն ջօհար ուղես հանել. Կոստ. Երզնկ. 102»:

Պարսկերեն քյահրեզ հտնող արհեստավորը կոչվում է «քյահրեզքյան»։ Պարսկերենում «ֆան» նշանակում է հանք, հոր, իսկ «քյան» նշանակում է քանդող, փորող։ Այսպիսով, «ֆանֆան» անվան պարսկական ծագումը պետք է համարել ընդունելի։ Ի դեպ, վանեցիկն այդ անունն արտասանում է ո՛չ թե ֆանֆան, այլ ֆանֆյան։ Պարսկական երկու արմատով նա ստեղծել է իր հայերեն բառը և ենթարկել իր քերականական օրենքներին։ Ինչպես հայտնի է, ա-ն չի հնչյունափոխվում հոլովման ժամանակ, սակայն նա կամ յա երկարաբառը հնչյունափոխվում է։ Վանեցիկն չի ստում ֆանֆյանենց տուն, այլ ասում է ֆանֆրենց տուն։ Հիշենք, որ վանի ամենամեծ քյահրեզը կոչվում էր «Ճոշ (մեծ) Քյանդոշի», մեկ ուրիշը՝ «Պստիկ Քյանդոշի»։ Վանի բարբառում «քան-դել» բառի հետ կա նաև «ֆյանդոնել» ձևը, և թուրքերենի ձևով կազմված է «ֆյանդոշի» բառը, որ նշանակում է «ֆանդող»։

Շատ ավելի նշանակալից է այն, որ վանից հայ քանքաններն էին հրավիրվում քյահրեզ «հանելու» նաև Պարսկաստանում՝ Ուրմիա լճի ավազանում։

Քանքանները երկրաշափական ոչ մի գիտելիք ու գործիք չունեին։ Նրանք աշխատում էին աշքաշափով, հաշվի առնելով տեղանքի թեքությունը, օրիենտիր ունենալով մեծ մասամբ բարձր բարդիները։ Առաջին հորը նշան անելուց հետո ուսրան հարմար տեղից, գետնին պառկած, մի աշքը փակելով նայում էր նշված կողմը, ապա վերադառնում «սական» տեղը, ու լարով չափել տալիս իր օրիենտիր ընտրած ծառերի բարձրությունը։ Այդպիսով, նա որոշում էր թե՛ առաջին և թե՛ երկրորդ հորի խորությունը (օր. 25 և 35 գյազ)։

Հորերն իրար միացնող գետնուղիները քանքաններն անվանում էին «ջրբեր» և «ջրգող»։ Ժրբերը այն գետնուղիներն էին, որոնց «առիքից» (առաստաղից) և պատերից ջուր էր ծորում գետնուղու մեջ՝ աստիճանաբար ավելացնելով հոսող ջրի քանակը։ Քանքանները «կաղճինով» (հատուկ կավով) այնպես էին սվաղում-պատում գետնուղու առաստաղն ու պատերը և փոքրիկ «շոփկներ» պատրաստում, որ պատերից ծորող ջուրը շղաղարներ գետնուղու մեջ ծորելուց, բայց և միաժամանակ չքանդեր առաստաղն ու պատերը և փլումներ առաջ չբերեր։ Բայց դետնի տակ, մանավանդ երբ մոտենում էին «սական», պատահում էին ավազախառն կամ կրային շերտեր, որտեղ նախընթաց հորերից եկող առատացած ջուրը կարող էր ծծվել ջրգող հիմքի մեջ՝ ապարդյուն դարձնելով նախընթաց բոլոր ջրակուտակ հորերի ու գետնուղու վրա թափված ամբողջ աշխատանքը։ Նման դեպքերում քանքանները «կաղճնում»—կավով պատում էին ամբողջ ջրգող տարածությունը։ Ըստ որում, լուսավորման համար քանքաններն ունեին միայն բարակ մեղրամոմի կծիկը (մոմպատ), որն իր աղոտ ու վետվետուն լույսով մեծ օգնություն չէր կարողանում ցույց տալ նրանց։ Ինչպես ջրղողության, այնպես էլ փլվածքների դեմ պայքարելու գործում քանքաններին մնում էր ապավինել միայն իրենց մեծ փորձին, հողի «էրակների» ճանաչման իրենց սրբակտիկային, «հոտառությանը» պատահած ավազախառն ու կրային շերտերի ուղղության ճիշտ կռահմանը։ Իսկ երբ պատահում էին ավազախառն ու կրային անհաղթահարելի շերտեր, ապա քանքաններն այդ հատվածում փոխում էին հորերի ուղղությունը և մեծ մասամբ չէին սխալվում նոր ուղղության ընտրությունը կատարելիս։

Արհեստական ջրանցքը մեծ խնամք է պահանջում. այն պետք է ամեն տարի գարնանը մաքրել։ Ավելի մեծ խնամք պահանջում են արհեստական աղբյուրները—քյահրեզները։ Հարկավոր է ոչ միայն ամեն գարնան մաքրել ջրատար առուները, այլև հմուտ ձեռքով շարունակ հետևել հորերի ու գետնուղու վիճակին։ Ամեն քյահրեզ իր «ուսթա քանքանն» ուներ, որը վանի համար շոշափելի վարձատրություն էր ստանում (տարեկան 40—50 օսմանյան ոսկի)։ Ուսթան իր «պանվորն» (բանվորն) ուներ, որն ամեն օր նրան ճախարակով իջեցնում էր հորերը, որտեղ ուսթան ստուգում էր գետնուղին։ Հորդ անձրևներից ու հեղեղումներից հետո մեծ նորոգումների անհրաժեշտության դեպքում լրացուցիչ քանքաններ էին վարձվում։ Այս կամ այն քյահրեզի ջուրը, նայած տարվան, երբեմն պակասում էր, երբեմն ավելանում, բայց խափանման և ջրի խապառ «ցամաքելու» դեպք հայտնի չէ։ Քյահրեզի փայտերներն իրենց հասարակական կուռ կազմակերպությունն ունեին և ուշադիր հետևում էին իրենց քյահրեզին։

Քյահրեզի փայր կոչվում էր «ճաշք», փայտերը՝ «ճաշքատեր», «ճաշք» նշանակում էր ոռոգման սեզոնում (հունիս-հուլիս-օգոստոս ամիսներին) տվյալ ոռոգման սխեմայից ամիսը երկու անգամ երեք ժամով օգտվելու «ջուր կապելու» իրավունք։ Փայտերներ կային, որոնք ունեին կես, մեկ և ավելի «ճաշք» ջուր, այդ նշանակում էր, որ նրանք տվյալ քյահրեզի ջուրը ամիսը երկու անգամ իրավունք ունեին 1½, 3 և ավելի ժամով կապելու իրենց այգու վրա։ Ամեն մի

քյահրեզ, անկախ ջրի առատությունից, ունեն 120 «ճաշք»։ Այսպիսով, 360 ժամը մեկ անգամ կրկնվում է քյահրեզի ջրից օգտվելու հերթը։

Ծառքատերերն ամեն գարնան հավաքվում էին քյահրեզի «սական» մոտ և մեկ տարում ըստ-ընդամենը «ջրի ճոշ» (մեծ)։ «Ջրի ճոշը» ռոճիկ չէր ստանում. նա քյահրեզի անխափան գործունեության հետ կապված բոլոր աշխատանքները կատարում էր հասարակական պարտականության կարգով։ Նրա վարձատրությունը ճառքատերերի ցուցաբերած վստահությունն էր ու պատվը։ «Ջրի ճոշ» ընտրում էին անկաշառ և առաքինի համբավ վայելող «ճառքատերի»։ «Ջրի ճոշ» ամենից առաջ վերանորոգում էր պայմանագիրը ուսթա քանքանի հետ և ապահովում նրա ռոճիկը։ Այնուհետև նա նշանակում էր ջրբաշխ, որն ամառային երեք ամիսների համար ստանում էր օւմանյան 5—6 ոսկի։ «Ջրի ճոշը» հին ջրբաշխին հրավիրում էր շարունակելու իր աշխատանքը՝ եթե նրա գործունեության նկատմամբ գանգատ ու բողոք չէր եղել նախորդ տարվա ընթացքում։ «Ջրի ճոշ» ընտրվել էր և համարյա ամեն տարի փոխվում էր, մինչդեռ ջրբաշխն ուսթա քանքանի նման գրեթե միշտ նույն մաքն էր, և նա էր, որ ապահովում էր քյահրեզի ֆինանսները։ Ջրբաշխը թեև մատյան էր պահում, սակայն անգիր գիտեր իր քյահրեզի բոլոր ճառքատերերին. նրանց այգիների մեծությունը և ջրի պահանջը։ Նա կոմբինացիաներ էր սարքում և ջուր էր ծախում ճաշք շունեցող այգիտերերին՝ դրամի մեծ մասը տալով իր ջուրն ուրիշին զիջող ճառքատիրոջը, իսկ փոքր մասը՝ «ջրի ճոշին», որի մոտ տարվա ընթացքում կլորիկ գումար էր գոյանում բանքանին ու ջրբաշխին վճարելու համար։ Որոշ քյահրեզների համար եկամուտի մշտական աղբյուր էր խողովակով ջուր ծախելը։ Օրինակ, քյահրեզը «սական» վերևից խողովակով ջուր էր տալիս ամերիկյան և շվեյցարական միսիոներներին, որոնք իրենց դպրոցները, հիվանդանոցը, ահհետանոցներն ու բնակելի շենքերն ունեին մոտակա թաղամասում։ Իրենց աղբյուրները, ջրավազանները և շատրվաններն ունենալու համար խողովակով ջուր էին գնում նաև մեծ սրճախանները և կազինոները։ Այսպիսով, պատահում էին տարիներ, երբ ճառքատերերն իրենց գրպանից ոչ մի կոպեկ չէին ծախսում քյահրեզի մշտական նորոգման վրա։ Ծառքը նրանց հնարավորություն էր տալիս միանգամայն ձրի ռոգելու իրենց այգիները։ Սրա համար էլ ճաշքի իրավունքը ոսկիներ արժեք և շատ հաշվադրուտ դեպքերում էր վաճառվում։ Ծառքը վաճառվում էր 1) այգու հետ՝ բարձրացնելով վերջինիս գինը, 2) նոր թաղ տեղափոխվելու դեպքում, երբ հին քյահրեզի ջուրը չէր բարձրանում նոր թաղում գնած այգու վրա (նման դեպքերում հաճախ կատարվում էր ոչ թե վաճառք, այլ փոխանակություն), 3) պանդխտության գնալիս ճանապարհածախսի հայթայթման խիստ կարիք ունենալու դեպքում։

Հայերեն բառարաններում չհաջողվեց գտնել «ք» վերջավորությամբ «ճաշք» բառը։ Արմատն, անշուշտ, «ճաշք»-ն է, որը սնվելու հետ միասին նաև ժամանակի հասկացողություն ունի։ Հեռավոր անցյալում ժամանակի տեղումնությունը որոշելու հարցը բարդ խնդիր է եղել։ Պրոֆ. Պետրուշևսկու վերոհիշյալ աշխատության մեջ կարդում ենք. «Գետերի և աղբյուրների ջրերի բաշխումը կատարվում է ըստ անհրաժեշտության շարժ-շարժ կամ ամս-ամիս հետևյալ կերպ. դեպի արտ ջուր տանող առվի մեջ դնում են պղնձե շատ բարակ և կլոր թաս, որի կենտրոնում փոքրիկ անցք կա. այդ անցքով կամաց-կամաց ջուր է լցվում թասի մեջ. երբ թասն ընկղմի, ապա դա մի լրիվ շափ է։ Դատարկված թասը նորից են դնում ջրի մեջ, մինչև որ պայմանավորված քանակությամբ ջուր հոսի դեպի արտ։ Թասի լցվելու համար հարկավոր է երկուսից մինչև երեք ժամ»։ Անտարակուսելի է, որ թասն այստեղ ծառայում է որպես ժամացույց։ Պարսիկ պրոֆ. Մուհամեդ Իբրալի հաստատում է այդ Պրոֆ. Պետրուշևսկու միևնույն աշխատության հաջորդ էջում կարդում ենք. «Նման անոթը XIII դարի վերջերին և XIII դարի սկզբին Ռավենդիին հիշատակում է փիլեզան պարսկերեն տերմինով, որի արաբերենը կլինի՝ ֆիլեզան։ Ռավենդիին աշխատության հրատարակիչ պրոֆ. Մուհամեդ Իբրալին այդ հրատարակությանը կցած բառարանում այսպես է բացատրում այդ տերմինը՝ «փիլեզան ընդհանրապես նշանակում է թաս (քյասա) և թասիկ (փիլալե) և հատկապես պղնձե թաս (թաս-ի միս)՝ հատակին փոքրիկ անցքով, որ դիք դնում են ջրի վրա և որոշում յրվա ժամերը»։

Թաս-քյասա բառերը պարսկերենից անցել են հայերենին։ Ուրեմն, պետք է ենթադրել, որ ժամացույցի գործածության տարածումից առաջ վանում էլ ջուր կապելու ժամանակը որոշել են հատակին փոքրիկ անցք ունեցող պղնձե նուրբ թասի միջոցով։ Այնուհետև, պետք է ենթադրել.

5 Н. П. Петрушевский, *нзվ. աշխ.*, էջ 129։

6 Ստ. Մալխասյանցի Բացատրական բառարանում «Ջրածամացույց» բառի տակ կարդում ենք. «Ջրի ժամացույց, անոթ, որի նուրբ ծակով հոսող ջրով չափում էին ժամանակը... Ջրածամացույցի գյուտը տեղի ունեցավ Գ դարում Ն. Բ. Սգիպտոսում» (հատ. 4, էջ 147—148)։

որ ճաշ ուտելու համար ծառայող թաս-քյասա անոթի անունը, պարսկերեն ձևի տարածումից առաջ, հայոց լեզվի մեջ եղել է «ճաշք»:

«Ճաշքը» վանում քյահրեզների կառուցման, պահպանման և ջրի օգտագործման միակ ձևն էր և նշանակում էր, ինչպես ասացինք, ամսական երկու անգամ տվյալ քյահրեզի ջուրն օգտագործելու իրավունք: Նոր «ճաշքը» գործուն էր, ապա այն վաճառվում էր շատ ավելի թանկ, բայց քանի որ քյահրեզը նոր պիտի կառուցվեր, ջուրը պիտի հոսեր լավագույն դեպքում մի քանի տարուց հետո, ապա հեշտ չէր «ճաշք» վերցնողներ և ավանսը մուծողներ գտնել: Ամերիկյան միսիոներները ծրագրել էին «Ուրբաթ առու» դաշտում հողեր գնելով ընդարձակել իրենց կալվածքները: Եվ ահա նրանք ցանկություն հայտնեցին բաժնեգրվել 40 ճաշք և չանխիկ մուծել դրամ: 120 ճաշքից 40 ճաշք վերցնելը նշանակում էր գերիշխել նոր քյահրեզի վարչության վրա: Նախաձեռնողները ամերիկյան միսիոներներին պատասխանեցին, թե հարյուր ճաշք արդեն ծախված է և նրանց կարող են տրամադրել ոչ ավելի, քան քսան ճաշքի իրավունք:

Քյահրեզներ կային, որոնց բոլոր ճաշքատերերը բացառապես այգեգործ մարդիկ էին, որոնց ունեցած բաժինը երբեք չէր անցնում 3 ճաշքից: Բայց կային քյահրեզներ, որոնք անձնական սեփականություն էին կամ գրեթե անձնական սեփականություն: Նման սեփականատիրերը ջուր վաճառելով մեծ գումար էին վաստակում:

Քյահրեզի մի առանձնահատուկ, ավելի հազվագյուտ տեսակի նկարագրությունը պահպանված է Պարսկաստանն ուսումնասիրած վենետիկյան դեսպան Զոդաֆա Բարրարոյի (XV դ.) ուղեգրության մեջ: «Պարսկաստանի այգ ամբողջ երկրամասը — գրել է Բարրարոն — մեր անցած ճանապարհով անպտուղ, չոր, ավազուտ և քարքարոտ է և շատ քիչ ջուր ունի, այնպիսի որ քաղաքներ կան միայն այնտեղ, որտեղ ջուր կա... Նրանց հացաբույսերը, խաղողն ու պտուղները աճում են ջրի ուժով. որտեղ ջուրը քիչ է, այնտեղ դժվար է ապրել: Այնուամենայնիվ, պարսիկներն աշխատում են գեղեցիկ ջուր բերել անգամ հինգ շաղակ ճանապարհ հեռու հոսող գետից. և այդ բանը նրանք անում են այսպես. գետի մոտ հոր են փորում, որի հատակից գետնուղի են պատրաստում այն ուղղությամբ, ուր ուզում են տանել ջուրը. մի քսան քայլ գետնուղի փորելուց հետո նրանք առաջինի նման նոր հոր են փորում և այդպես հորից-հոր գետնուղի անցկացնելով ջուրը հասցնում են իրենց ուզած տեղը: Բերելով այս հատվածը, պրոֆ. Պետրուշևսկին եզրակացնում է՝ «Այդպես են անում այն ժամանակ, երբ տեղանքի ռելիեֆի պայմաններում հնարավոր չէ վերերկրյա ջրանցքով ջուր տանել որոշ տեղանք»:

Վանում էլ կար գետի ջրից սկիզբ առնող այդպիսի քյահրեզ, որի հորերի խորությունը երկու-երեք մետրից ավելի չէր, բայց ջուրը վերերկրյա ջրանցքով չէր բերվել ոչ թե տեղանքի ռելիեֆի պատճառով, այլ միանգամայն այլ նկատառումներով: Այգեստանում «նորատունկներ» անունով համատարած այգիներ կային քաղաքի հարավային (Կլոր տարի բլրի) և արևելյան (Սըխկա-ի տակ) կողմերում, որտեղ բնակություն դեռևս չկար: Այգեստանի արևելյան կողմում, Թաղա քյահրեզից վեր, Սըխկա հայաբնակ գյուղի տակ ընդարձակ պարապուտ էր գնել մի հայ հարուստ, որի տունը քաղաքում հայտնի էր «Աղվրսկանք» անունով: Պարասպուտը այգի դարձնելու համար առաջին հերթին ջուր էր պետք: Եվ նա պետությունից մեկ ջաղացի ջուր էր գնել ջրաշատ Դարման լյուղի մոտ, իր պարապուտից 10—12 կմ հեռավորության վրա: Եթե նա այգ ջուրը վերերկրյա ջրանցքով քաղաք հասցներ, ապա ամառվա շոգ ժամանակ ջուրը գոլորշիանալով շատ կպակսեր, համարյա կես կդառնար: Այնուհետև, կար նաև գողանալու վտանգը: Վերերկրյա առվից ամեն մարդ կարող էր ջուր կապել իր փոքրիկ հողամասի վրա, մանավանդ, որ առուն անցնելու էր Զորովանց, Զրվանդանց թրքաբնակ և Սըխկա հայաբնակ գյուղերի հողերի միջով: Վերերկրյա առու փորելն անհամեմատ էժան կնստեր, սակայն, հաշվի առնելով ջրի բնական (գոլորշիացման) և արհեստական (գողանալու) կորուստի դեմ պայքարելու նկատառումները, այգ հարուստն անհրաժեշտ էր գտել երկու-երեք մետր խորությամբ գետնուղի փորելով ջուրը հասցնել իր պարապուտները և «Աղվրսջուր» ծախելով կրկնապատկում էր իր հարստությունը:

«Շամիրամա առու» ջրանցքը քաղաք հասնելուց առաջ ջուր էր տալիս Կեմ, Անգղ, Մաշտախ, Իշխանի գոմ, Խոռոգոմ, Քյոշկ, Սըվարտան (Սուրբ Վարդան) գուտ հայաբնակ և Արտամետ ու Մրվստան խառն բնակչություն ունեցող գյուղերի արտերին ու այգիներին: Շամիրամա առվի ջուրը կրային քաղաղորություն ունեք և ամեն տարի նրա հունը և պատերը կրակավում էին: Կիրը, ջրի շատ դանդաղ հոսանքի պատճառով, նստում էր նաև առվի մեջ աճող բույսերի վրա. գյուղացին այդ տեսնելով ասում էր՝ «առուն անիծ է կապել»: Ամեն տարի մարտի մեկից

չրանցքի ջուրը երկու շարաթով կտրվում էր և գյուղացիները ոչ միայն բահ, այլև քլունգներն առած մարում էին առուն՝ կոտորելով ու գուրս թափելով քարացած կիրը:

Շամիրամա առվի ջուրն օգտագործվում էր տարրեր ձևերով: Նախ և առաջ ասենք, որ ջրանց-
րը պետական սեփականություն էր և ուներ իր միրավր⁸ (ջրպետը), որ պետական պաշտոնյա էր: Ինձն գյուղի բանդի տեղ գրված էր ծակքար՝ մեկ ջրաղացի ջուր բաց թողնելու տրամադծով: Ջրի բաշխումն անհավասարաչափ էր. օրինակ, Կեմ մեծ գյուղն ուներ երեք ծակքար, բայց օրվա ընթացքում ջուր ստանում էր միայն 12 ժամ, չյոշկ և Խոռոգոմ փոքրիկ գյուղերը միասին ունեին մեկ ծակքար, բայց օրվա ընթացքում 24 ժամ շարունակ ջուր էին ստանում: Շամիրամա առվից օգտվող հայաբնակ գյուղերում շարունակ ջրի պակասություն էր զգացվում, իսկ Արտամետ մեծ գյուղը, որն ուներ 350 տուն թուրք և 150 տուն հայ բնակչություն, սպառում էր ջրի ամենա-
մեծ բաժինը: Արտամետի հայերը պարապում էին երկրագործությամբ և արհեստներով, իսկ Քուրքերը՝ միայն այգեգործությամբ: Թեև Արտամետի կենտրոնում հորդ աղբյուր կար, բայց նրա ջուրը մեծ մասամբ հոսում էր դեպի ծով: Այդիների ոռոգման համար,— քանի որ Արտամետը հարթ վայր չէր, — տարբեր տեղերում 7—8 ծակքար էր գրված, բացի դրանից, Արտամետի թուրքերը ձրիարար ստանում էին «Թուվուզ սուլի» («Հալի ջուր»): ամենքի դռան առջևից շարունակ ջուր պիտի հոսեր՝ նամադի համար և գրեթե ամենքի բակում ավազան կար:

Շամիրամա առվի ջրօգտագործումը և մաքրումը հայկական գյուղերի սահմանում, մինչև Արտամետ, կատարվում էր «պճեղի» հաշվով: Պճեղ բառի դիմաց Ստ. Մալխասյանցի բառարա-
նում կարգում ենք նաև՝ «... Գյուղի երկրորդ (միջակ) աստիճանի ունևորը, որ համայնի հավա-
սար տնտեսություն և ազդեցություն չունի, այլ միայն նրա կեսը, միայն վեց լուծ եզ ունի (վա-
նում)... Հողը անադդար բաժանեցին. երեք պճեղ իրանք առան, մի պճեղ նրան տվին»: Հայոց Ձորում պճեղ ասելով հասկանում էին 10 օրավար հող, որ հավասար է մոտավորապես 4 հեկ-
տարի: Ջուրը տրվում էր ըստ հողի երկրագործական պահանջի՝ ամիսը մեկ անգամ, իսկ եթե հողատերը վար ու ցանք չէր արել, այլ բոստան էր տնկել, բանջարեղեն էր աճեցնում կամ այգի ուներ, ապա նա լրացուցիչ ջուրը պետք է ամեն անգամ դրամով գներ միրավի նշանակած ջրբաշ-
խից: Առվի մաքրման ժամանակ ամեն մի պճեղ տալիս էր մեկ սարակ (բանվոր):

Քաղաքի Շամիրամա թաղում, որ համատարած այգեստան էր, Շամիրամա ջուրը բաժանվում էր տարբեր ուղղությամբ հոսող 5 առվի և բաշխվում էր ճաշքով, իսկ մաքրման համար ճաշքա-
տերը տալիս էր այնքան աշխատող ձեռք, որքան ճաշք ուներ:

Այսպիսով, վանը ո՛չ թե ի բնե ջրաշատ էր, այլ մարգն էր լճի առափնյա չորային հովիտներն ու դաշտավայրերը ջրառատ դարձրել և դարեր շարունակ խնամքով պահպանում էր ու զարգաց-
նում իր կառուցած ջրային սիստեմները: Ըստ վերջին տեղեկությունների Շամիրամա առուն ներկայումս չի գործում, որովհետև անմարդաբնակ են դարձել նախկինում հայաբնակ գյուղերը:

⁸ Պարսկերեն «միրաբը» թուրքերենի մեջ դարձել է «միրավ»։ Նրա հսկիչ պոստը վանում կոչ-
վում էր «միրավի շաղըր» (ջրպետի վրան)։